ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ
ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ
ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Մեզի համար մեծ ուրախություն է մեր Փրկչի՝ Քրիստոսի հրաշալի հարության ավետիսով՝ Ձերդ Սրբազնության բերելու Մեր հայրական սիրո ողջույնը և մեր հավատացյալ ժողովուրդին՝ Մեր ամենաբարի մաղթանքներն ու հայրական օրհնությունը:

Սուրբ Հարության լույսով անգամ մը ևս թող ամրապնդվի քրիստոնեական մեր հույսը, թե երկնային ողորմությամբ պիտի թագավորե վերջապես խաղաղությունը մարդկային աշխարհի վրա և պիտի բացվի ճանապարհը հոգիներու փրկության:

«Զի Աստուած որ ասաց ի խաւարէ լոյս ծագել. որ և ծագեաց իսկ ի սիրտս մեր ի լուսաւորութիւն գիտութեան փառացն Աստուծոյ ի դէմս Յիսուսի Քրիստոսի» (Բ Կորնթ. Դ 6):

Փառք հարուցյալ Փրկչին մերո Հիսուսի Քրիստոսի. ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: